



ԻՆՖՈՐՄԱՑԻՈՆ
ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ
ԶԵՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԻՈՒԹՅՈՒՆ

ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՃԱՄԲԱՐ Հուլիս-օգոստոս 2017





[Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միությունը](#) նախաձեռնում է Նոր ֆորմատի ամառային ճամբար, որը կհամախմբի

սփյուռքի ու Հայաստանի երիտասարդությունը, կամրապնդի ՀՀ մարզերում ապրող երեխաների և սփյուռքահայ երեխաների միջև կապը և հետագա համագործակցությունը, կհանդիսանա ինժեներական նախնական գիտելիքների ու հմտությունների ձևավորման հիանալի հարթակ:

Ճամբարի մասնակիցներ

Ճամբարը նախատեսված է **10-13 և 14-17 տարեկան** երիտասարդների համար

Ճամբարի մասնակիցներն են

- ✚ ՀՀ բոլոր մարզերում գործող «Արմաթ» ինժեներական լաբորատորիաներում և ռոբոտաշինության խմբակներում ուսուցանող դպրոցականները,
- ✚ Սփյուռքում բնակվող երեխաները
- ✚ Հայաստանյան ընկերությունների/կազմակերպությունների աշխատակիցների երեխաները
- ✚ Անապահով ընտանիքների երեխաները



Ճամբարի օրակարգը



Ճամբարի տևողությունն է **8 օր**, որը կլրացվի հատուկ մշակված օրակարգով:

Օրակարգը ներառելու է

- ինժեներական գիտելիքների, ծրագրավորման և ռոբոտաշինության սկզբնական գիտելիքների և հմտությունների ձեռքբերման վարժանքներ,
- դասընթացներ,
- առաջադրանքներ,
- մրցույթներ,
- ժամանկցային ծրագիր՝ թիմային սպորտային խաղեր, ինտելեկտուալ մրցույթներ և այլն:

Կարևորելով հայրենասիրության և սեփական երկրի նկատմամբ կապվածության սերմանումը, ճամբարի հիմնական ուղղություններից է **հայրենաճանաչությանը ուղղված միջոցառումները՝**

- արշավներ,
- ազգային պարերի դասընթացներ,
- Նախնական հրազենային պատրաստություն, բուժ.պատրաստություն, քարտեզագիտություն



Այսպիսով, ճամբարի ընթացքում կազմակերպվող միջոցառումների ու առաջադրանքների միջոցով «Արմաթ» ինժեներական լաբորատորիաների երեխաները իրենց փորձը և գիտելիքները կփոխանցեն իրենց հասակակիցներին սփյուռքից, ինչը *բաց երկխոսության, թիմային աշխատանքի, փորձի և գիտելիքների կիսման, կապերի հաստատման հիանալի հնարավորություն է լինելու:*

Մասնակցության պայմաններ

Ճամբարում մասնակցության արժեքը ներառում է՝

- Տեղափոխում Երևանից ճամբարի տարածք և հետադարձ: Անհրաժեշտության դեպքում նաև դիմավորում և ճանապարհում օդանավակայան:
- 8 օրվա կեցություն և սնունդ ճամբարի տարածքում
- Մասնակցություն ճամբարի շրջանակներում կազմակերպվող բոլոր միջոցառումներին

Մեկ երեխայի ճամբարում մասնակցության արժեքը կազմում է 350 \$:

Պայմանները ճամբարում

- ✓ Երեքանգամյա սնունդ
- ✓ Հատուկ վերապատրաստում անցած ջոկատավարներ, ովքեր ունենալով մեծ փորձ ճամբարների կազմակերպման ոլորտում կզբաղվեն ինչպես երեխաների խնամքով, այնպես էլ կուղղորդեն և կաջակցեն մրցութային առաջադրանքների իրականացման ժամանակ
- ✓ Ճամբարի տարածքում գործում է բուժ. կետ, որտեղ երեխաները ճամբարի սկզբում անցնում են բժշկական ստուգում
- ✓ Անձնական հիգիենայի ապահովման համար ճամբարում կան բոլոր համապատասխան պայմանները /առանձին լոգասենյակներ/



✓ Սենյակները համալրված անհրաժեշտ գույքով, կատարվում է ամենօրյա մաքրում

***Մրցույթների և առաջադրանքների իրականացման համար ողջ անհրաժեշտ գործիքակազմը և սարքավորումները տրամադրվում են կազմակերպիչների կողմից:**

***Երեխայի մասնակցությունը հաստատվելուց հետո ծնողների և ԻՏՁՄ միջև կնքվում է պայմանագիր, որի համաձայն ճամբարի կազմակերպիչները ստանձնում են ճամբարի կազմակերպման, երեխայի լիարժեք մասնակցության ապահովման պատասխանատվությունը:**

Մասնակցության համար խնդրում ենք լրացնել հետևյալ [հայտը](#):

Պատասխանատու՝

Աննա Սարգսյան

Հեռ. +37491009181

Էլ հասցե՝ anna.sargsyan@uite.org

